

95. Մէլիք ձեռք թալեց Տաւթի եախէն, որ ձիուց վար բերէր. Տաւթ մղբախ զարկեց, ձեռ ծակեց: Մէլիքն ասաց: «Ծօ Տաւթ, էն գետախ որ իմ ձեռք ծակեցեր, իմ ողջանց¹ գնաց»: Երկուսն էլ կպան խեղ մէկ մէկու կուիւ, չում իրիկուն քեաւպաթին² կը զօրնէին, մէկ մէկէլից խոյս մը միս կլուցուցին. մէկ զմէկ չյաղթեցին:

96. Մէկ էլ օր երբ էլան կուլելու, Տաւթն ասաց մէլիքին. «Տէօրիս³ պիտի կուլենք կիւռզով. երեք կիւռզ տըւ ձի կարկ. թէ որ ես ինկեայ, իմ վիզ կարի, իմ արուն քե խալալ էինի. թէ որ չինկեայ, երեք կիւռզ ես քե զարնեմ. թէ ինկեար, քըոյ վիզ աի կըսբեմ, քըոյ արուն ձիկ խալալ էլին»: Տաւթ կայնաւ: Մէլիք երեք կիւռզ իգարկ, իրեքն էլ պէօզ գնաց: Տաւթն ասաց. «Մէլիք, աէօրիս աէօրն⁴ իմն ի. աէ աիւ կայնի, ես զարնեմ»:

97. Մէլիք կայնաւ. մէրն նազարէք զարնել խոււր, որ Տաւթ շըշիւուի, շիւանայ զարնել: Տաւթ մօրն ասաց. «Ետայ նազարի ձէնեք կարել տուր. ես մէկ կիւռզ Ասածու խաթրին կըաշխեմ, մէկ կիւռզ էլ քըոյ մէրութնի խաթրին կըաշխեմ. քիւնչի աիւ էրկսիս էլ մէր ես. մէկ կիւռզ մենակ կգարկեմ քըոյ լաճուն. ինկեաւ իսայ վիզ կկարեմ, թէ չինկաւ, ուրիշ չէշիա կուիւ պիտի անենք»: Տաւթն ասաց ու կիւռզ զարկաւ, իսկեց մէլիքն. վիզ աի կարէր, մէրն ինկաւ վեր Տաւթի ասաց, ասաց. «Ասածու սիրուն էլին, քըոյ ախպէրն ի, վիզ մի կարե. թահլայ⁵ եօթ աիթ թող քըոյ թրի աիէն ընցնի, էլին քե եէսիր՝ քե խառճ խարաճ աայ»: Տաւթ բաշխեց ուր մօր խաթրին, թրի աիէն եօթ աիթ ընցուցին, խէլամազ⁶ առին, տարան տէն:

98. Երբ որ մէլիքի խելք վէրէն էկաւ մօր խնամքով, ասաց. «Տաւթն ո՛ւր է»: — Ասին ուրեն, հալ հէքաթ՝ էսպէս էլաւ: — Մէլիքն ասաց. երբ կելին որ ես ինոր էսիր էլնեմ: Իմացաւ, որ Տաւթ գետի բերան գնացեր ի. էլաւ խեղ ուր մարդերաց 40 լիւծ գէօմէշ լծեց, մէկ ճօպանախան⁷ զընծիլ մը քաշեցին տարան, խարիւլիւթնով Տաւթի չորս կողմ զաթըթեցին, կապեցին բերին վրանի տոււ. թրեր սրեցին, որ Տաւթի վիզ զարնէին:

99. Զէնով Յովան ախաւ էրկնուց երես, րը Տաւթի ասաղ նվաղեր էր. թուաւ ուր սեւ լայեղ ձիու քեամակ բանձր ձէնով մէկ խաա կանչեց: Տաւթ՝ որ ձէն լսեց միան ինկաւ, ուր տէր յիշեց, ասաց.

1 Կարողութիւն՝ ոյժ. 2 Արցուն: 3 Այժմ, հիմայ: 4 Հերթը: 5 Միայն թէ: 6 Խիւցնոր. ուշադնաց: 7 ճօպանի հաստաւթեամբ: